



# Գուրգեն Մահարի

## Երեք բարդի

Խորենին

1

Երեք բարդի ես զիտեմ,  
Նրանք նազում են իմ դեմ,  
Օ, երեք բարդի.  
– Մանկությո՞ւն իմ դեղնածամ,  
Մանկությո՞ւն իմ, որ անցար  
Նոր ցանած արտից...

Զանգի դողանջ եմ հիշում,  
Նեղ արահետ, անտառ, շուն  
Ու գառներ ճերմակ.  
Անհուշ լեռան մի ուսից  
Բարձրացող վանք ու լուսին  
Եվ ինչ-որ վրան:

Այդ բարդին շա՛տ է հեռու,  
Նա մշուշվեց օրերում,  
Յոք սարից անդին.  
– Մանկությո՞ւն իմ դեղնածամ,  
Մանկությո՞ւն իմ, որ անցար  
Նոր ցանած արտից:

2

Երկորդ բարդին, ահա՝ նա,  
Բանուկ մի ճամփի վրա,  
Երգուն ու խշուն.

Շուրջը՝ զյուղեր, կանաչ ծով,  
Առուն՝ անուշ զնոցով,  
Մարգեր թարմաշուն:

Շուրջը երկիր մի զարթնող,

Անուշ բուրող հերկ ու հող,

Հազար կանչող ձեռք.

Դաշտի վրա լայնանիստ

Զարթնող ուժեր անհանգիստ,

Ակոսների երգ:

Լայնասաղա՛րք իմ բարդի,

Զարթնող երկրի մեծ ճամփին,

Երա՛զ սպիտակ,

Դու շարժում ես ձեռքերդ

Ու երգում ես երգերդ

Բիլ երկնքի տակ...

3

...Երրորդ բարդի, երրո՛րդ ծառ,

Դեղնասաղարք ու պայծառ,

Որ կոանում ես.

Նայում ես խոր ու բարի,

Ճեռավո՞ր քո անտառից,

– Ի՞նչ է անունդ...

Դու ծերությունն ես անհուշ,

Շուրջդ մուժ ու աղջամուղջ,

Ճողը՝ անհանդարտ,

Նա մոմոռում է խանդից,

Եռում եռուն եռանդից,  
Սնում նոր անտառ:

Կկռանաս դու մի օր,  
Մրտամեռ ու գլխիկոր,  
Կանաշ արտի դեմ.  
Շուրջըդ, շուրջըդ կշափեն,  
Նորից խինդով կծափեն  
Հազա՞ր բարդիներ:

Եվ օրերը հեռացած,  
Ստվերների պես ծածան,  
Կնստեն սրտիդ.  
– Մանկությո՞ւն իմ ոսկեծամ,  
Մանկությո՞ւն իմ, որ անցար  
Նո՞ր ծլած արտից...